

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 135

Նոր Կտակարանը սկսում է մեսիական ակնկալութիւններով Հրէաների մէջ: Հաւատարիմ Աստծոյ ժողովուրդը, ինչպէս Զաքարիան, Եղիսաբեթը, Յովսէփը, Մարիամը, Սիմէօնը, եւ Անան գիտէին թէ մի օր Իսրայէլի Թագաւորը՝ «Իսրայէլի Մխիթարութիւնը», պիտի գար եւ վերականգնեցնէր Դաւիթեան միապետութիւնը (Ղուկաս 1:46-55, 67-79, 2:25-38):

Գարբիէլ հրեշտակն ասեց Մարիամին որ Աստուծը նրա որդուն պիտի տար «Նրա Դաւիթ հօր աթոռը...եւ Նրա թագաւորութիւնը վերջ չի լինիլ» (Ղուկաս 1:32-33): Նոյնիսկ Մոգերը, տեսնելով Յիսուսի աստղը, արեւելքից եկել էին տեսնելու Թագաւորին (Մատթէոս 2:2), ակնարկելով Բաղասամի մարգարէութիւնը Թւոց 24:17ում: Ապա Յովհաննէս Մկրտիչը երեւան եկաւ քարոզելով ապաշխարութիւն ժողովրդին, ասելով՝ «մօտեցել է երկնքի թագաւորութիւնը» (Մատթէոս 3:2): Իր առաջին պատգամում, Յիսուսը Ինքն հռչակեց թէ՝ «Ժամանակը կատարել է, եւ Աստծոյ թագաւորութիւնը մօտեցել է. ապաշխարեցէք, եւ հաւատացէք աւետարանին» (Մարկոս 1:15): Ապա Նաթանայէլը հռչակեց Յիսուսին «Իսրայէլի Թագաւորը» (Յովհաննէս 1:49): Այս նոյն տիտղոսն էր որ ժողովուրդը աղաղակեցին Քրիստոսի Երուսաղէմի յաղթական մուտքի ընթացքում (Յովհաննէս 12:13): Մատթէոսը բացատրում է թէ այդ եղելութիւնը Զաքարիա 9:9ի Մեսիական մարգարէութեան իրագործումն էր (Մատթէոս 21:4-5):

Սակայն ժողովրդի մեծամասնութիւնը չհասկացան (վրիպեցին) Յիսուսի ներկայացման իսկ նշանակութիւնը. եւ նրանք որոնք հակառակեցին Նրան՝ յատկապէս Հրէաների կրօնական առաջնորդները, նախատեցին Նրան եւ Պիղատոսի առջեւ Նրան կեղծօրէն ապստամբութեան մեղադրեցին (Ղուկաս 23:2): Եւ երբ Պիղատոսը հարցրեց Նրան թէ՝ «Դու ես Հրէից Թագաւորը» Յիսուսը պատասխանեց՝ «Դու ասեցիր» (համար 3): Այս պատասխանով Յիսուսը դաւանեց թէ Նա էր Հրէաների Թագաւորը, բայց ոչ այդ իմաստով որ Պիղատոսը, Հրէաների առաջնորդները, եւ ժողովրդի մեծամասնութիւնը ենթադրել էին (Յովհաննէս 18:33-38): Յետագայում առաքեալները հռչակեցին թէ Աստծոյ խոստումները Դաւիթին գերազոյնօրէն իրագործեցին Քրիստոսի գալուստով (Գործք Առաքելոց 2:29-31, 15:14-17): Ուրեմն այդ ինչ որ Հին Կտակարանը նախագուշակեց, Նոր Կտակարանը յստակօրէն եւ անհերքելիօրէն յայտարարում է: Սպասելու ժամանակը անցել էր, եւ Թագաւորը եւ Նրա թագաւորութիւնը վերջապէս հասել էին:

Քրիստոսի թագաւորութեան բնոյթը – Մենք կարող ենք ասել թէ Աստուած բոլոր բաների եւ եղելութիւնների թագաւորն, տիրականն ու պահպանողն է: Յայտնապէս այս սահմանումը վերաբերում է Երրորդութեան բոլոր երեք անձնաւորութիւններին, եւ ուրեմն Յիսուս Քրիստոս, որպէս Երրորդութեան երկրորդ անձնաւորութիւնը, լինելով Ինքն աստուծային, բնութեամբ ունի բացարձակ իշխանութիւն բոլոր ստեղծագործութեան վրայ: Երկրորդ իմաստով, որպէս այդ օրինութեան յատուկ տեղը ուր ժողովուրդը յօժարութեամբ հպատակուում են Աստծոյ տիրութեան, Աստծոյ թագաւորութիւնը սովորաբար սահմանուում է աստուածաբանների կողմից որպէս Քրիստոսի «միջնորդական թագաւորութիւնը» կամ «մեսիական թագաւորութիւնը»: Այս տարբերում է նախկին իմաստից, որովհետեւ այն հիմնուած է Քրիստոսի միջնորդական գործի վրայ, ու ոչ Նրա ստեղծագործական գործին: Այս «միջնորդական թագաւորութիւնը» յաւելեալ զանազանում է որպէս Քրիստոսի «շնորհաց թագաւորութիւնը» ու Նրա «զօրաց թագաւորութիւնը»:

Շնորհաց թագաւորութիւնը – Քրիստոսի շնորհաց թագաւորութիւնը մի հոգեւոր թագաւորութիւն է ուր Յիսուսը տիրում է Իր ժողովրդի սրտերի ու կեանքերի վրայ (Ղուկաս 17:21, Գաղատացի 2:20)՝ նրանց որոնց Նա փրկանաւորել է (Կողոսացի 1:13, Ա. Պետրոս 2:9-10): Քրիստոսի թագաւորութեան մէջ իւրաքանչիւր հաւատացեալ կամեցողութեամբ գիտակցում եւ հնազանդում է Յիսուսին որպէս իր բացարձակ Թագաւորը: Հաւատացեալի կեանքի նպատակն է սիրել, հնազանդել, ծառայել ու պաշտել իր Թագաւորին (Մարկոս 12:30, Հռովմայեցի 12:1, Եբրայեցի 12:28): Մուտքը այս թագաւորութեան միայն հաւատքի եւ ապաշխարութեան միջոցովն է, հիմնաւորում Քրիստոսի լրացած ու կատարեալ գործի վրայ, շնորհաբարօրէն արտադրում Աստծով (Յովհաննէս 1:12-13, 3:3, Հռովմայեցի 3:24-26, 10:9-13, Եփեսացի 2:8-9): Բոլոր հաւատացեալներ Աստծոյ ընտանիքի անդամներն են, ունենալով նոյն մենաշնորհումները եւ օրինութիւնները, եւ կոչւած սիրելու եւ ծառայելու իրարու, ապրելու սուրբ կեանքեր Սուրբ Հոգովը, եւ ուստի սպանել մարմնի գործերը (Յովհաննէս 13:34, Հռովմայեցի 8:12-13, Գաղատացի 5:16-25, Կողոսացի 3:12-17):

Այս թագաւորութիւնը այս աշխարհիցը չէ (Յովհաննէս 18:36-37, Ա. Յովհաննէս 2:16), չի ղեկավարում քաղաքական կամ զինուորական ուժով եւ միջոցներով, այլ այն մի հոգեւոր թագաւորութիւն է կառավարում Աստծոյ Խօսքի եւ Հոգու միջոցով (Յովհաննէս 16:13, 17:17, 19, Հռովմայեցի 14:17, Բ. Թեսաղոնիկեցի 2:13): Օգոստինոսը ակնարկեց ճշմարիտ հաւատացեալների մարմինը որպէս «անտեսանելի» Եկեղեցին, բոլոր վերածնւածներից կազմւած: Նա զանազանեց այդ «տեսանելի» եկեղեցուց, որը նա ասեց թէ մի «խառն մարմին» է հաւատացեալներով եւ անհաւատացեալներով (Մատթէոս 7:21-23, 13:24-30): Թէպէտ զատ, սակայն անտեսանելի Եկեղեցու անդամները մեծաւ մասամբ գոյութիւն ունեն բոլոր աշխարհում եղած տեսանելի եկեղեցու: Քրիստոսն է Եկեղեցու Գլուխը (Եփեսացի 1:22-23, Կողոսացի 1:18), բայց միմիայն վերածնւածներն են Նրա մարմնի անդամները՝ հոգեւորապէս միացած Նրան, եւ ուստի միմեանց (Հռովմայեցի 12:5, Եփեսացի 4:25, Կողոսացի 2:19):